Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՓԱՐ

24(627)
21.08.2021
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԵՐԲ ԳԱԼԻՍ Է ՍԵՊՏԵՄԲԵՐԸ

Այս սեպտեմբերը թերևս մի քիչ ուրիշ կլինի. հանգամանքների բերումով արցախցի դպրոցականների մի մասն ուսումը չի շարունակի հարազատ դպրոցում, ուր առաջին անգամ ծնողի ձեռքից բռնած՝ երկյուղով ոտք էր դրել: Խոսքն այն աշակերտների մասին է, ում ծննդավայրը ժամանակավոր գտնվում է թշնամու վերահսկողության տակ, և իրենք ճարահատյալ սփռված են հանրապետության տարբեր համայնքներում: Բայց Արցախը նրանց համար բնավ սփյուռք չէ, սա նույն հայրենիքն է, որի համար իրենց ծնողներն ու ավագ եղբայրներն արյուն են հեղել: Նույն լեռներն են ու մարդիկ՝ իրենց ընդհանրական սովորույթներով, և այս առումով ոչ մի տեղահանված դպրոցական օտարված չպիտի զգա նոր միջավայրում:

ԿԳՄՍ նախարարությունը, բնականաբար, ամեն ինչ անում է նրանց կրթական պայմանները բարելավելու համար: Այն համալիր նախաձեռնությունները, որոնցով հատկապես հետպատերազմյան ժամանակաշրջանում հանդես է գալիս գերատեսչական ղեկավարությունը, կարելի է անվանել յուրօրինակ բարեփոխումների մեկնարկ: Եվ հենց ա՛յս հենքով պիտի գնահատել նոր ուսումնական տարվա առանձնահատկությունը, որովհետև մենք դատապարտված ենք լինել ոչ միայն քաջ, այլ նաև խելացի ու հմտավարժ: Դպրոց-բանակ կապը մենք սովորաբար դիտարկում ենք հայրենասիրական դաստիարակության համատեքստում, մինչդեռ 44-օրյա պատերազմը ցույց տվեց, որ միայն քարոզչական ներարկումները քիչ են: Մեզ երևի թե պակասում էր արդիական մոտեցումը օրվա մարտահրավերներին, մանավանդ որ դրանք ժամանակ առ ժամանակ փոխվում են: Մեր անվտանգության ապավեն ՊԲ զինվորը վաղը կարող է լիարժեք պատրաստ չլինել նոր սերնդի պատերազմներին, նրան փոխարինող է պետք, իսկ այդ փոխարինողն այսօր դպրոցում է սովորում: Եվ քանի որ ճակատագիրը մեզ դատապարտել է հարատև պատերազմների, ուստի պարտավոր ենք ապագա բազմաֆունկցիոնալ մարտիկին աճեցնել սկսել դպրոցում՝ սիրել տալով հայրենիքը, զարգացնելով գիտական միտքը, ամրապնդելով մարմինն ու ոգին: Պարտադիր չէ, որ ամենապատրաստ արցախցի պատանին հետագայում խրամատում ցույց տա իր ունակությունները, նա կարող է դրանք իրացնել նաև կենսական այն բնագավառներում, որով մեր երկիրն ավելի կհզորանա, կդառնա արժանապատվորեն աննվաճ:

Համոզված ենք, հանրապետության կրթօջախների ամեն մի դասատու, բարձրագույն գիտական հաստատությունների յուրաքանչյուր դասախոս ձգտում է լավագույնս դրսևորել իրեն վերապահված «խրամատում»: Բայց ինչպես ասում են՝ ճշմարիտ գնահատողը նորին մեծություն ժամանակն է, և շոշափվող արդյունքը:

Երբ գալիս է սեպտեմբերը, մենք նորովի ոգևորությամբ ենք լցվում: Սա ևս տարիների ավանդույթ է, և ուրեմն տոգորվենք բացառապես լավատեսությամբ ու եռանդով՝ միշտ հիշելով, որ երկրի ներկան ու ապագան խտացված են դպրոցում:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ, ՃԻՇՏ ՈՒ ԱՐԴԱՐԱՄԻՏ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ. ՍԱ ԴԱՐՁՆԵՆՔ ԱՅՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԻ ՄԵՐ ԿԱՐԳԱԽՈՍԸ

(Հարցազրույց Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարար Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ հետ)

- Տիկին Ղարախանյան, չնայած ամբողջ տարվա ընթացքում ենք նախապատրաստվում հաջորդ ուսումնականին, այնուամենայնիվ, օգոստոսը նոր ուսումնական տարվա նախապատրաստման, կատարված աշխատանքներն ի մի բերելու, անելիքները խմբավորելու ամենաթեժ ամիսն է: Ի՞նչ ընթացքում են դրանք:

- Կուզենայի հարցին պատասխանել Ձեր առաջին մտքի տրամաբանության շրջանակում: Պատերազմից հետո նախարարությունը երկու ուղղությամբ է աշխատանքներ սկսել՝ վերականգնում և զարգացում: Վերականգնումը ենթադրում էր հրթիռահրետակոծված դպրոցների, մանկապարտեզների շենքերի, դրանց ենթակառուցվածքների շինարարական և գույքային աշխատանքներ: Մենք մեծամասամբ վերականգնել ենք վնասված ուսումնական շենքերը: Համենայն դեպս, չկա այնպիսի մի դպրոց, մանկապարտեզ, որը չգործի, այլ խնդիր է, թե ինչ չափով են աշխատանքներն արված: Դպրոցները դեռ ունեն կահույքի և տեխնիկայի վերականգնման խնդիրներ: Այս հարցում մեզ օգնում են Հայ կրթական հիմնարկությունը և հոգևոր իշխանության տարբեր թևերը, «Հայաստան» համահայկական հիմնադրամը, Սփյուռքի մեր համայնքները և պարզապես բարի անհատներ: Շատ ու շատ մարդիկ մեր կողքին են: Իմ խորին համոզմամբ, մինչև մյուս ուսումնական տարի մենք չենք ունենա գույքային ու տեխնիկական հագեցվածության խնդիր:

Պետական և Հայ կրթական հիմնարկության միջոցներով մասամբ կատարվել են և շարունակվում են մի շարք հրթիռակոծված դպրոցների շինարարական աշխատանքները: Դրանք Կաղարծու, Մարտակերտի հ. 2, Մարտունու հ. 1 և հ. 2, Ստեփանակերտի հ. 10 դպրոցներն են: Վերջինս հիմնովին կառուցման կարիք ունի, բայց որպեսզի ուսումնական գործընթացը չտուժի, աշխատանքները մաս-մաս ենք անում: Մի խոսքով, դպրոցաշինությունը շարունակվում է:

- Իսկ զարգացման ծրագրերից որո՞նք կառանձնացնեիք:

- Կրթական համակարգի լոկոմոտիվն է դառնալու «Երկարօրյա դպրոց» ծրագիրը: Մենք դա սկսում ենք 14 համայնքներում, բայց մինչև ուսումնական տարեվերջ կդառնա 20: Այս առնչությամբ իմ երախտագիտությունն եմ ուզում հայտնել «Հայաստան» համահայկական հիմնադրամին, որը հանձն է առել երկարօրյա դպրոցի մոդուլային սենյակների վերականգնման, տեխնիկական զինման հարցերը, ինչպես նաև Հայ կրթական հիմնարկությանը, ՀԲԸՄ-ին, որոնք պատրաստ են իրենց բաժին նպաստը բերելու այս ծրագրի ի կատար ածմանը: Նախատեսում ենք երեք տարում մեր բոլոր 108 դպրոցներում ներդնել «Երկարօրյա դպրոց» ծրագիրը, որը ոչ միայն գրավիչ է դարձնելու Արցախի կրթական միջավայրը, այլ նաև համայնքահեն է, մեծապես նպաստելու է համայնքի դիմացկունությանը, համայնքի դիմադրողականության մակարդակի բարձրացմանը, և որ շատ կարևոր է, իր հիմքում ունի մասնակցային կրթության սկզբունքը, այսինքն՝ հանրային մտածողություն՝ հեռու ես-ական նկրտումներից: Պատերազմից հետո ամոթ կլինի, եթե մենք չկրենք հանրային արժեքներ և չգնանք հանրային մտածողության զարգացմանը, հանուն հայրենիքի գաղափարի ապրելուն: Մենք բոլորս պետք է ունենանք մեկ նպատակ, և դա հայրենիքը հզորացնելն է, հանրային ու ազգային մտածողությունը: Մնացած ամեն ինչ իրադրական է և մեծ հաշվով դատապարտված է ձախողման:

Նախարարության զարգացման ծրագրի մեջ է «Հմտություններ Արցախին» ռազմավարական բաղադրիչը, որով մենք մտնելու ենք ինտենսիվ վերապատրաստումների փուլ: Պատերազմից հետո նախադպրոցական ուսումնական հաստատությունների և հանրակրթական դպրոցների տարրական օղակների 100-ից ավելի դաստիարակների ու դասավարների շրջանում անց են կացվել հոգեբանական աջակցությանն ու հոգեբանական վերականգնմանն ուղղված վերապատրաստումներ Հայաստանից հրավիրված բարձրակարգ մասնագետների մասնակցությամբ: Վերապատրաստվել են Արցախի բոլոր հանրակրթական դպրոցների հոգեբաններն ու հատուկ մանկավարժները: Հոգեբանական աջակցության ծրագրերը շարունակում են գործել տեղահանված աշակերտության և բոլոր այն անձանց հետ, ովքեր դիմում են հոգեբանական աջակցություն ստանալու նպատակով: ԱՀ ԿԳՄՍ նախարարությունը «Օրանժ էլեֆանտ» («Նարնջագույն Փղիկ») կազմակերպության հետ պայմանագիր է կնքել, և այդ ծրագրի հովանավորներն են շվեյցարացիներն ու ֆրանսիացիները: Մենք շարունակելու ենք հմտություններով ու կարողություններով զինել Արցախի ուսուցչությանը, հոգեբաններին ու հատուկ մանկավարժներին:

Մեր զարգացման ծրագրերի թվում է նաև «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի՝ փոփոխությունների վրա հիմնված ուսումնառությունը: Սա նորություն է այն առումով, որ խմբակային աշխատանքը նպաստում է համայնքի զարգացմանը: Դասարանը խմբակավարի հետ ծրագիր է գրում համայնքի թույլ և ուժեղ կողմերի մասին և թե ինչպես զարգացնել: Դա կարող է լինել փոքրիկ դպրոցամերձ այգի, մեղվափեթակներ: Մենք Բերդաշենում ունենք մեղվափեթակների խմբակը, որը վարում է «Դասավանդիր, Հայաստան»-ը: Նախորդ ուսումնականում կար Քաշաթաղում: Իմաստն այն է, որ խմբակի պարապմունքների ընթացքում երեխաների մոտ ձևավորում է քննադատական մտածողություն, վերլուծելու, նախաձեռնելու կարողություն, վերջնարդյունքում՝ հանրային արժեքներ, սրտացավություն ու հոգատարություն համայնքի, պետական գույքի ու հայրենիքի նկատմամբ:

Զարգացման ռազմավարական ծրագրերից է աշակերտների մոտ տեխնիկական մտքի ձևավորումն ու արմատավորումը: Այդ նպատակով շարունակում ենք «Արմաթ» լաբորատորիաների և ԱԹՍ ուսումնական աշխատանոցների ներդրման գործընթացը: Պատերազմից հետո դպրոցներում տեղադրել ենք 5 «Արմաթ» լաբորատորիա, որից 2-ը՝ պետական բյուջեի հաշվին, 3-ը՝ հովանավորների: Ըստ մեր ճանապարհային քարտեզի, առաջիկա երկու տարում բոլոր դպրոցները պետք է ունենան «Արմաթ» լաբորատորիա: Նույնիսկ եթե դպրոցը փոքր համակազմ ունի, բոլոր երեխաները պետք է կարողանան օգտվել «Արմաթ» ինժեներական լաբորատորիայից: Այս տարի Հայաստանում կազմակերպված «Արմաթ» ամառային ճամբարին Արցախից մասնակցել է 48 աշակերտ, ընդ որում, ռոբոտաշինության խմբակը հաղթել է մրցույթում: Ուժեղ արմաթցիներին մենք ուղղորդում ենք Թումո, իսկ Թումոյից ունենք նոր ճանապարհ՝ տեխնոպարկը, որն ստեղծել ենք պատերազմից հետո: Մեկ տեխնոպարկ օգոստոսի 15-ից աշխատելու է «Պոլ Էլյուար» Ֆրանկոֆոնիայի կենտրոնի շենքում: Մյուսը Մուշկապատում է: Տարբեր հովանավորների միջոցով մի հրաշալի, շատ ազդեցիկ նախագիծ է կյանքի կոչվում, որով զարգացնելու ենք Մարտունու այդ ենթաշրջանի բոլոր գյուղերը: Տեխնոպարկում դասավանդվելու է ավելի քան 12 IT մասնագիտություն, և աշխարհի 3 մլն այդ ոլորտի թափուր տեղերը սկսելու են լրացնել, ինչու չէ, Հաղորտու, Բերդաշենի, Աշանի, Նոր շենի երեխաները՝ առանց իրենց համայնքներից դուրս գալու: Նրանք աշխարհն են բերելու այստեղ: Համայնքում մնալով՝ աշխատելու են գումար, ինչն այսօր Հաղորտու երեխաներն են անում: Բարձր և ակտուալ գիտելիքը համայնքում մնալու և համայնքը գրավիչ դարձնելու միակ ճանապարհն է: Այս խոսքն արդեն գործ է դառնում:

Մեր կրթական կյանքի հաջորդ խոշորագույն նորությունը «Ռազմագիտություն» առարկայի նոր հայեցակարգի ներդրումն է: Մենք արմատապես փոխում ենք ռազմագիտության դրվածքը: Առարկան սկսում էին 8-րդ դասարանից, հիմա յոթերորդից է: Զինղեկ նշանակելու կարգը, նյութատեխնիկական բազան լրիվ փոխվում են: Մի խոսքով, արմատապես փոխվում են զինղեկի հաստիքին ներկայացվող պահանջները, այդ թվում՝ վարձատրության չափը: Մեր երեխաները կատարելապես պատրաստ են լինելու ամեն ինչի: Այն դասագիրքը, չափորոշիչը, մեթոդական փաթեթը, որը կար, պարտվել է 44-օրյա պատերազմում:

Նախարարությունում քննարկում է ծավալվում 12-րդ դասարանում պարտադիր «Ավտոգործ» ծրագիր մտցնելու շուրջ: Բոլորը պետք է մեքենա վարել սովորեն, դրա անհրաժեշտությունը ցույց է տվել պատերազմը: Դա տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարի առաջարկն է, և համատեղ գործակցելով՝ մենք կգնանք դրան: Դա նորից պահանջելու է ռեսուրսներ, բայց մենք կրթության զարգացման վրա միջոցներ չենք խնայելու:

- Նոր ուսումնականի նախաշեմին սովորաբար կազմակերպվում են ուսուցիչների ինտենսիվ վերապատրաստումներ: Ավանդույթը կշարունակվի՞:

- Այո, օգոստոսին առարկայական ուսուցիչների վերապատրաստումներ են լինելու: Մենք դիմել ենք «Մասնակցային դպրոց» կազմակերպությանը, որն ստացել է վերապատրաստումների իրավունք, բայց որոշ առարկաներից՝ «Ֆիզիկա» և «Մաթեմատիկա», մենք հրավիրելու ենք «Քվանտ» վարժարանի և ֆիզմաթ դպրոցի հայտնի դասավանդողներին: Նախատեսվում է «Շախմատ» առարկայի ուսուցիչների վերապատրաստում: Իսկ երկարօրյա դպրոցի դասապատրաստողների վերապատրաստումներն այս պահին սկսված են: Ես այն կարծիքին եմ, որ պետք է վերապատրաստվեն նաև տեղահանված ուսուցիչները, նաև՝ չաշխատող: ՀՀ-ում ժամանակավորապես գտնվող մեր ուսուցիչները նույնպես մեր տեսադաշտում են:

☞2

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԵՐԿԱՐ ՍՊԱՍՎԱԾ ԵՐԿԱՐՕՐՅԱՆ

Երկարօրյա ուսուցման մասին մանկավարժական, ծնողական հասարակությունները երազում էին Խորհրդային Միության փլուզումից ի վեր: Կրթությանը վերաբերող տարբեր մակարդակների քննարկումներում այս թեման արծարծվում էր՝ դպրոցահասակ երեխաներին արդյունավետ և որակյալ ուսումնական գործընթացում ընդգրկելու, ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքներին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումների աջակցման, ինքնուրույն սովորելու կարողությունների, ստեղծագործական ունակությունների զարգացման նպատակով պահանջվող միջոցառումների առաջին շարքում: Թեման ավելի քան հրատապ դարձավ Արցախյան երրորդ պատերազմից հետո:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը երկարօրյա ուսուցումը համարում է հետպատերազմյան կրթական համակարգի զարգացման ռազմավարական ծրագիր: Նախարարությունն իրազեկում էր, որ «Երկարօրյա դպրոց»-ի հայեցակարգ է մշակվել, որի շրջանակում նախատեսվում է շրջան առ շրջան և վերջում քաղաքներում երկարօրյա ուսուցման անցնել: Սկզբնապես կընդգրկվի գյուղական համայնքների 20 դպրոց, ապա աստիճանաբար կներառվեն Արցախում գործող բոլոր դպրոցները: Հայտարարություն էր տարածվել այդ գործում հիմնականում տեղահանված ուսուցիչներին՝ որպես դասապատրաստողներ, իսկ տվյալ համայնքում այդպիսին չդիմելու պարագայում այլ մանկավարժների ներառելու մասին՝ նրանց վերապատրաստելու նպատակով:

Եվ ահա օգոստոսի 9-ին Ստեփանակերտում մեկնարկեց «Երկարօրյա դպրոց» ծրագրով դասապատրաստողների վերապատրաստման առաջին դասընթացը:

ԿԳՄՍՆ-ի կողմից վերապատրաստումները համակարգող՝ նախարարի խորհրդական Ալենուշ Գրիգորյանն ասաց, որ սեպտեմբերի 1-ից երկարօրյա ուսուցում կկազմակերպվի Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Շուշիի շրջանների 14 դպրոցում:

Վերապատրաստող մասնագետների աշխատանքային խմբի ղեկավար՝ կրթության գծով ԱՀ նախագահի հասարակական հիմունքներով խորհրդական Վահրամ Սողոմոնյանը տեղեկացրեց, որ վերապատրաստման դասընթացը, որը կտևի մինչև օգոստոսի 15-ը, կանցկացվի երկու փուլով. առաջին երեք օրերին կմասնակցեն Թաղավարդ Կալեր, Խրամորթ, Պատարա, Չափար, Հաթերք, Սոս, Եղցահող, Կարմիր Շուկա համայնքների դասապատրաստողները: Հաջորդ երեք օրերին՝ Բերդաշեն, Մաղավուզ, Վանք, Քերթ, Աստղաշեն, Աշան համայնքների ուսուցիչները՝ ընդհանուր՝ 54 հոգի, ինչպես նաև՝ նշված դպրոցների տնօրեններն ու փոխտնօրենները, քանի որ նաև այդ օղակով է մեծապես պայմանավորված, թե ինչ հաջողությամբ կընթանա ծրագիրը:

Ուսուցիչների ընտրության հարցում, Վ. Սողոմոնյանի խոսքով, կարևոր է, որ նրանք լինեն լավ, փորձառու մասնագետներ, ունենան կազմակերպչական, ստեղծագործական հմտություններ, նախաձեռնողականություն, ազատ միտք: Առաջնահերթությունը տրվել է տեղահանված ուսուցիչներին:

«Երկարօրյա»-ն 20-ի փոխարեն 14 դպրոցներում սկսելու պատճառը, ըստ մեր զրուցակցի, որոշ գյուղերի կրթօջախների սեյսմակայունությունն ամրապնդելու ուղղությամբ նախատեսված շինարարական երկարատև աշխատանքներն են, ինչպես նաև՝ դոնորական միջոցների սղությունը:

«Երկարօրյա դպրոց» ծրագիրը կյանքի է կոչվում Սփյուռքի տարբեր համայնքների և կազմակերպությունների միջոցներով: Հիմնականը «Հայաստան» համահայկական հիմնադրամն է: Գլխավոր գործընկերը «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամն է: Դոնորների միջոցով յուրաքանչյուր դպրոցում վերանորոգվում է 2 արդիական դասարան. մեկը՝ տարրական՝ 1-4-րդ, մյուսը՝ 5-9-րդ միջին դասարանների համար: Դասասենյակները սովորական չեն, ձևավորվում են հատուկ դիզայնով, համալրվում՝ ժամանակակից սարքավորումներով, գրականությամբ, խաղերով, որպեսզի գրավիչ լինեն երեխաների համար:

Ծրագրի պատասխանատուներն այս պահին զբաղված են ոչ միայն շինարարական, այլև դպրոցականների սննդի կազմակերպման, ճաշացանկի կազմման հարցերով:

Սեմինար-պարապմունքների ընթացքում քննարկվում է, թե բովանդակային ինչ հարցերի վրա կենտրոնանալ, ինչ գործիքներ կան, ինչպես օգտագործել միմյանց հետ համագործակցելու աշակերտների, ծնողների, համայնքի հնարավորությունները, և այդ ամենի հետ միասին մասնակիցները քննարկում են նաև, թե ինչ խնդիրներ կարող են ծագել, ինչ ռիսկեր կան, և փորձում են որոշակի շտկումներ անել:

Երկարօրյային ներառվելու են ուսուցիչների առարկայական խմբակները: Նախատեսվում է ոչ միայն դասապատրաստում, այլև գործնական հետազոտական, ինքնուրույն աշխատանք, համայնքի համար ինչ-որ բան անելու, գիտելիքը գործնականորեն կիրառելու, մշակութային, մարզական և ժամանցային պարապմունքներ:

Վերապատրաստումների աշխատանքային խմբում ընդգրկված է կրթության փորձագետ ***Սերոբ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ:*** Մեր հարցազրույցը.

- Պարոն Խաչատրյան, որպես փորձագետ՝ Դուք վերլուծություն կատարե՞լ եք, թե ինչպես կարող է երկարօրյան նպաստել կրթության որակի բարձրացմանը:

- Մենք ունենք ընտանիքներ, որոնք կարողանում են իրենց երեխաների կրթությունը հոգալ բարձր մակարդակով: Բայց նաև ունենք երեխաների մեծ խումբ, որի ընտանիքն ի վիճակի չէ՝ տարբեր պատճառներով. երեխան չի կարողանում ինքնուրույն հաղթահարել դժվարությունները և սկսում է հրաժարվել սովորելուց: Այստեղ պետությունը գալիս է իր փոխհատուցման ծրագրով և դպրոցում լրացուցիչ ծառայություն է ներդնում: Դա բերում է հասարակության հավասարության, ինչը շատ կարևոր է: Երեխան զգում է, որ պետությունն իր մասին հոգ է տանում: Հետո այդ երեխաներն ավելի շնորհակալ կլինեն իրենց դպրոցներին, համայնքներին, պետությանը: Աֆրիկյան հայտնի ասացվածք կա. «Եթե գյուղը չի տաքացնում իր երեխային, երեխան վառում է գյուղը»: Այսինքն, եթե մենք երեխաների հանդեպ հոգատարություն չցուցաբերենք պետության կողմից կամ չփոխհատուցենք պակասը, մենք խնդիր ենք ունենալու: Իսկ այս ձևով, ինչպիսին երկարօրյան է, կարող ենք ունենալ շատ շնորհակալ շրջանավարտներ, որոնք վաղը հաջողության հասնելով, գուցե իրենք էլ աջակցեն ապագա սերունդներին, որ նրանք էլ ստանան այդ ծառայությունները:

- Կարելի՞ է ասել, որ սա սոցիալական ծրագիր է կրթության մեջ:

- Ունի այդպիսի բաղադրիչ, մասնավորապես՝ սննդի, որը շատ կարևոր է: Բայց սննդի բաղադրիչը միայն սոցիալական չէ: Նաև կրթական է, որովհետև ապացուցված է, որ եթե երեխաները դպրոցում չեն սնվում, դա ազդում է կրթության որակի վրա: Ե՛վ Հայաստանում, և՛ Արցախի դպրոցներում այդպիսի խնդիր ունենք, քանի որ դպրոցներում չկան ճաշարաններ, բուֆետներում հաճախ անառողջ սնունդ է վաճառվում: Մի կարևոր խնդիր էլ կա: Մենք դպրոցներում կարևորում ենք երեխայի միայն ուղեղի զարգացումը: Այսինքն՝ կրթությունը համարում ենք որպես, այսպես ասած, ինտելեկտուալ բան: Դրա համար մեր դպրոցներում, ցավոք, որոշ առարկաներ՝ «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Տեխնոլոգիա», «Ֆիզկուլտուրա», երկրորդական են համարվում, որովհետև դրանք այնքան էլ գլխի համար չեն: Բայց այդպես մտածելը սխալ է: Երկարօրյա ծրագրով, որը ներառում է նաև մշակութային բաղադրիչ: Մենք ուզում ենք, որ երեխաներն այդ հնարավորությունն էլ ունենան: Թատրոնը, օրինակ, ունի հսկայական ներուժ. երեխաների մոտ զարգացնում է և՛ համագործակցություն, և՛ ինքնադրսևորում: Երեխան հասկանում է մի կարևոր բան. կրթության մեջ էական է այն, որ ինքը պետք է երկար փորձի, մինչև նպատակին հասնի: Շատ կարևոր է «Ազգային երգ ու պար» առարկան: Պարը զարգացնում է համագործակցությունը: Երբ մենք ձեռք-ձեռքի տված, շրջան կազմած պարում ենք, դա ուղղակի պար չէ, մշակույթ է՝ լայն իմաստով: Եվ դա ապացուցված է: Մեզ պետք են համակողմանի զարգացած մարդիկ: Երկարօրյա ուսուցումն այդ միջավայրը և հնարավորությունը տալիս է:

- Սովորաբար 8-9-րդ դասարաններում լավ սովորող շատ երեխաներ արդեն աշխատում են մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ. լրացուցիչ պարապում են: Նրանց համար ժամանակի վատնում չի՞ լինի երկարօրյան:

- Լավ սովորող երեխաներից սպասելիքները հետևյալն են. երկարօրյայում նրանք կարող են օգնել իրենց ընկերներին: Դա լավ է նաև նրանով, որ իրենք ուրիշին սովորեցնելով՝ ավելի լավ են սովորում: Բացի այդ, երեխաները սոցիալական էակներ են: Նրանք չեն սիրում մեկուսանալը: Եթե դպրոցի 130 աշակերտից 120-ը մասնակցում է, մնացածն էլ կուզենան, քանի որ զգում են, որ եթե չգնան, դուրս կմնան այդ խմբից: Երկարօրյան նաև միասնականության զգացողություն է առաջացնում: Շատ լավ սովորողներին էլ երկարօրյայում կարող ենք դրսևորվելու դաշտ տալ: Մի երեխա ունի դերասանի, մյուսը՝ շախմատիստի, մեկ ուրիշը՝ սպորտսմենի տաղանդ կամ մեկ այլ բանի նկատմամբ հակում, և նրան պետք է ուղղորդել այդ ուղղությամբ: Երեխաների մասնագիտական կողմնորոշումը լինելու է երկարօրյայի կարևոր բաղադրիչներից մեկը: Երբ հնարավորություններն ընդլայնում ես, նաև երեխայի տաղանդն է զարգանում: Դպրոցը հզորանում է, որովհետև երեխան ուրիշ տեղ չի տեսնում իր տաղանդի բացահայտումը, այլ՝ այդտեղ:

Երեխաները պետք է հասկանան, որ պետության համար այս ծանր իրավիճակում կրթության կարևորությունը չի նվազում, հակառակը՝ բարձրանում է:

- Երկարօրյա ուսուցումը կրթության ոլորտի համար փաստորեն քարշիչ ուժ է:

- Հարկավ: Պետությունը մարդկային ռեսուրսի վրա է ներդրում կատարում: Դա ամենակարևորն է, քանի որ երկիրը եթե մարդկային կապիտալ չունեցավ, առաջընթաց էլ չի ունենա:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ...

1 ***- Անդրադառնանք նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում կատարվող բարեփոխումներին:***

- Ունենք շատ լավ նորություն: Դա «Անտոնիա Արսլան» հայ-իտալական կրթահամալիրի ստեղծումն է Ստեփանակերտի հ. 4 դպրոցի և արհեստագործական ուսումնարանի բազայի վրա: Կրթահամալիրը տալու է հիմնական և ավագ արհեստագործական կրթություն: Դա լինելու է միջազգային չափորոշիչներին համապատասխան արհեստագործական կրթություն տվող ուսումնական հաստատություն: Ֆինանսական տարբեր հոսքերով մենք կրթահամալիրը կապելու ենք տնտեսության հետ: Կրթահամալիրը կունենա իր տնտեսությունը և նորաձևության տունը: Ուսուցումը կազմակերպվելու է հայ-իտալական ծրագրով, որը վարելու են իտալացի հմուտ վարպետները՝ համատեղելով հայկական ու իտալական լավագույն փորձը: Լավագույն ուսանողները հնարավորություն են ունենալու հիմնադիրների հովանավորությամբ ուսումնառության մի հատվածն անցկացնել Իտալիայում, իսկ վարպետները՝ իրենց վերապատրաստումը: Ասեմ, որ նյութատեխնիկական ամենաբարձր կարգի բազան արդեն գտնվում է Ստեփանակերտում: Իմ կանխատեսմամբ, դա Արցախի ամենաազդեցիկ կրթական կենտրոնն է դառնալու:

«Եզնիկ Մոզյան»-ը շարունակելու է իր գործունեությունը շինարարական մասնագիտությունների բլոկով:

Մարտունու արհեստագործական ուսումնարանը նույնպես հզորացնելու ծրագիր ունենք: Պետք է ֆոնդահայթայթում անենք և այդ ուսանողների համար սնունդ կազմակերպենք այս տարի, քանի որ նրանք գալիս են հեռավոր գյուղերից:

Եկող տարվա համար կվերանայվեն համալսարաններում գործող միջին մասնագիտական կրթական ծրագրերի ցանկերը: Այսօր դրանք նպատակին չեն ծառայում, չեն համապատասխանում շուկայի պահանջներին: Այս առնչությամբ նշեմ նաև, որ եկող տարի նոր ուսումնականից սկսելու ենք դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հատուկ աշխատանքներ, որպեսզի չլինի այնպես, որ պետության 21 նպատակային տեղերը Հայաստանի ամենահայտնի բուհերում մնան թափուր, ինչպես այս և նախորդ տարիներին էին:

- Բարձրագույն կրթության ոլորտում նախատեսվո՞ւմ է որևէ բան:

- ՀՀ-ում քննարկվող օրենքը մի շարք թերություններ է ունեցել, և մենք էլ այդ կարծիքին ենք: Չպետք է շրջանցել «ակադեմիական ազատություն» սկզբունքը: Լավ առումով պահպանողական բաները պետք է պահպանվեն: «Բարձրագույն կրթության մասին» օրենքի վերաբերյալ այստեղ էլ կլինեն հանրային քննարկումներ:

- Ինչո՞վ կառնձնանա նոր ուսումնականը: Ինչ-որ կարգախոս այդ առումով ընտրե՞լ եք:

- Պատերազմից հետո մենք վերակառուցումներ ենք արել յուրաքանչյուրս մեր մեջ: Ես անհատապես այս կարծիքին եմ. մենք պետք է ապամոտաժենք մեր ներսը և խորը ինքնավերլուծությունների գնանք: Յուրաքանչյուրս պետք է վերլուծենք մեր ներսը, մաքրենք մեզ, պետք է դուրս գանք մեր հարմարավետության գոտիներից և գնանք դեպի բարձր գաղափարներ՝ թեկուզ նեղվելով, անհարմարավետություններ ապրելու գնով: Արցախը, իմ խորին համոզմամբ, հայոց ազգային գաղափարախոսության ամենահզոր մոտիվացիան է: Եվ եթե Արցախը չմնա որպես Արցախ, մենք չձգտենք հետ բերել այն, ինչ կորցրել ենք, մենք սերունդներին բան չունենք տալու: Մենք պիտի ուժեղանանք: Հիմա գիտելիքն է աշխարհում հաղթանակներ կռում: Ես համոզված եմ, որ ինտենսիվ աշխատելու դեպքում առաջիկա տարիներին կարող ենք ստեղծել այնպիսի գիտելիք, որը կդառնա մեր անվտանգության երաշխավորը: Մենք պետք է ունենանք սեփական պաշտպանության միջոցներ, կարողանանք ինքներս մեզ պաշտպանել: Ես երազում եմ այնպիսի համակարգ ստեղծելու մասին, որով մենք հոգեկերտվածքային փոփոխությունների կգնանք, այսինքն՝ հույսներս չենք դնի որևէ մեկի վրա, չենք ակնկալի որևէ մեկի աջակցությունը:

Հիմա մենք անձնատուր ենք հոգեկան ծանր խռովքին, բայց մեզանից յուրաքանչյուրն իր մտքում պետք է ունենա Ե. Չարենցի «ազգային երազը» և Վահան Տերյանի «հոգևոր Հայաստանը»: «Ահազանգ» և «հորիզոն» բառերը Չարենցի բառապաշարում ամենագործածականն էին դարասկզբին, երբ բզկտված էր հայրենիքը, և կրկին մարդկային մեծաթիվ կորուստներ ունեինք: Ականջալուր լինենք մերօրյա մարտահրավերներից հնչող ահազանգերին և ունենանք մեր խաղաղ հորիզոնը:

Մենք պետք է դառնանք հանրային դաստիարակներ ու գործենք նոր հայրենաշնչությամբ: Անսպառ եռանդ ու ստեղծագործական ներշնչանք եմ մաղթում մեր ուսուցչությանը:

Մեկ դար առաջ Նիկոլ Աղբալյանը, որը կրթության և արվեստի նախարարն էր և ղեկավարում էր բզկտված հայրենիքի կրթական համակարգը, ծնել է համազգային լուսավոր գաղափարներ: Ես իմ սեղանին եմ պահում Նիկոլ Աղբալյանի գիրքը և նրանից հոգևոր աջակցություն եմ ստանում: Գիտեմ, որ մեր համակարգն ամենահզորն է, և մեր ուսուցչներն իմ դաշնակիցներն են: Ուրեմն, վստահաբար հաղթահարելու ենք մեզ պատուհասած մարտահրավերները և դուրս ենք գալու մեր երազած հանգրվանը:

Հարցազրույցը՝
Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

ՈՒՍՊԼԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

11 օգոստոսի 2021թ. N 501/Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2021-2022 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն հավելվածի:
2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչությանը՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով սույն հրամանով հաստատված օրինակելի ուսումնական պլանները:
3. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը և կրթության պետական տեսչությանը՝ ապահովել ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ՝ Լ. ԴԱՐԱԽԱՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2021 թվականի օգոստոսի 11-ի
N 501/Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

1. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) 2021-2022 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ Ուսումնական պլան), բացառությամբ 7-րդ և 8-րդ աղյուսակների, ունեն երկու՝ պետական և դպրոցական բաղադրիչներ: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հաստատությունը Ուսումնական պլանի հիման վրա դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլան(ներ)ը:
2. Հաստատության Ուսումնական պլանը սահմանում է միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների, և հանրակրթական պետական ծրագրի նորմատիվային ծավալը (սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը)՝ ըստ դասարանների:
3. Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համաձայնությամբ՝
1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար.
2) բազմահամակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում.
3) Նախարարության կողմից տվյալ Հաստատության համար երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում:
4. Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է՝
1) «Հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումներ»-ում,
2) օտար լեզվի ընտրությունը՝ «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում:
5. Ուսումնական պարապմունքները Հաստատությունում սկսվում են 2021 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2022 թվականի մայիսի 27-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա և մայիսի 30-ին 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ 1-ին, 32՝ 2-րդ և 34՝ 3-12-րդ դասարանների համար: Բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական շաբաթվա տևողությունը սահմանում է ուսումնական հաստատությունը՝ 15-օրյա ժամկետում համաձայնեցնելով Նախարարության հետ:
6. Ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է Ուսումնական պլանի հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար, ըստ անհրաժեշտության կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ):
7. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ բացառությամբ ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն՝ միջին, ծանր և խորը խանգարումներ ունեցող երեխաների, ինչպես նաև տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների, անհատական ուսուցումն իրականացվում է «Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլան»-ով՝ համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 7-ի:
8. Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող, ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն՝ միջին, ծանր և խորը խանգարումներ ունեցող երեխաների ուսուցումն իրականացվում է «Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլան»-ով՝ համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 8-ի:
9. Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովմանը:
10. Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման տասը միավորային սանդղակ:
11. Գիտելիքների ստուգումների, հիմնական և միջնակարգ կրթության ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման այլ սանդղակները բերվում են գնահատման 10 կամ 20 միավորային գրանցման:
12. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականները, բացառությամբ սույն հավելվածի 14-րդ կետով նախատեսված դեպքի:
13. Սովորողների ընթացիկ գնահատումն իրականացվում է բանավոր հարցման, գործնական աշխատանքի, թեմատիկ աշխատանքի և կիսամյակային ամփոփիչ աշխատանքի ձևերով: Թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ աշխատանքներն իրականացվում են գրավոր եղանակով: Բանավոր հարցումների, գործնական աշխատանքների, թեմատիկ աշխատանքների նվազագույն թիվը կիսամյակի ընթացքում սահմանում է Հաստատությունը՝ մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ առաջնորդվելով Նախարարության կողմից հաստատված առարկայի ծրագրով, գնահատման մեթոդաբանությամբ և մեթոդական ցուցումներով: Կիսամյակային ամփոփիչ աշխատանքն իրականացվում է կիսամյակի ընթացքում մեկ անգամ՝ կիսամյակի վերջում:
14. 1-ին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիր:
15. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի (մեկ ակադեմիական դասաժամի) տևողությունը 45 րոպե է:
16. Տարրական դասարաններում (1-4-րդ) յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:
17. Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ. աշնանային՝ 2021 թվականի հոկտեմբերի 25-31-ը ներառյալ, ձմեռային՝ 2021 թվականի դեկտեմբերի 27-ից 2022 թվականի հունվարի 9-ը ներառյալ, գարնանային՝ 2022 թվականի մարտի 21-27-ը ներառյալ:
18. 1-ին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2021 թվականի հոկտեմբերի 18-31-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2021 թվականի դեկտեմբերի 27-ից 2022 թվականի հունվարի 23-ը ներառյալ, գարնանայինը՝ 2022 թվականի մարտի 21-ից ապրիլի 3-ը ներառյալ:
19. 2-րդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2021 թվականի հոկտեմբերի 25-31-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2021 թվականի դեկտեմբերի 27-ից 2022 թվականի հունվարի 23-ը ներառյալ և գարնանայինը՝ 2022 թվականի մարտի 21-27-ը ներառյալ:
20. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման լիազորված մարմնի՝ շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) (այսուհետ՝ Լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար սույն հավելվածի 17-րդ, 18-րդ և 19-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետներում Հաստատության նախաձեռնության դեպքում Լիազոր մարմնի կողմից կարող են կատարվել փոփոխություններ: Լիազոր մարմինը փոփոխությունները առնվազն հինգ աշխատանքային օր առաջ համաձայնեցնում է Նախարարության հետ:
21. Հաստատությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետներ և այլն) կրթության շարունակությունը ապահովելու համար կարող է հանրակրթական հիմնական կրթական ծրագրերն իրականացնել հեռավար ուսուցման ձևով:
22. Նախարարությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետներ և այլն), կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների և սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցերում: Սույն փոփոխությունները կարող է կատարել նաև հաստատությունը՝ բաց թողնված ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու կամ ուսումնական պարապմունքները հեռավար եղանակով կազմակերպելու, ինչպես նաև ըստ հաստատության ենթակայության՝ Լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով:

☞4

ՈՒՍՊԼԱՆ

3☞ 23. Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում Հաստատության դիմումի հիման վրա Լիազոր մարմինը կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով Նախարարությանը: Նախարարության ենթակայության հաստատություններում սույն հավելվածի 17-րդ, 18-րդ և 19-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև Հաստատության կողմից լրացուցիչ արձակուրդի նախատեսումը կատարվում է Հաստատության նախաձեռնությամբ՝ Նախարարության համաձայնությամբ:

24. Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տևողությունը և ժամկետները, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահելով Նախարարությանը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

25. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ.

1) դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախասիրություններին, Հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով,

2) դպրոցական բաղադրիչի ժամաքանակը պետական պարտադիր առարկաներին բաշխելու դեպքում ուսուցումն իրականացվում է սույն Ուսումնական պլանի միջնակարգ դպրոցի, ինչպես նաև ավագ դպրոցի հոսքերի ուսումնական պլանների ընդհանուր հանրակրթական առարկաների համար նախատեսված ծրագրերով,

3) նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է «Կիրառական տնտեսագիտություն» (9-րդ դասարան), «Կյանքի հմտություններ» (2-8-րդ դասարաններ), «Բնապահպանություն» (7-8-րդ կամ 8-9-րդ դասարաններ), «Էկոլոգիա» (8-9-րդ դասարաններ), «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում» (7-րդ կամ 8-րդ դասարան), «Ֆերմերային գործ» (11-12-րդ դասարաններ), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ և 11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (2-4-րդ դասարաններ), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հոգեբանություն» (7-8-րդ դասարաններ), «Մշակույթի պատմություն» (7-9-րդ դասարաններ), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ձեռնարկատիրական կրթություն» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը: Նշված առարկաների ուսուցումն այլ դասարաններում Հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո: Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո,

4) Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով տվյալ Հաստատության, տվյալ դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից,

5) դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է,

6) դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում և դասացուցակում:

26. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում.

1) 12-րդ դասարանի 1-ին կիսամյակում ուսումնասիրվող հանրակրթական պետական ծրագրի Ուսումնական պլանի նորմատիվային ծավալը սահմանվում է շաբաթական 34 դասաժամ՝ ապահովելով 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաների ուսումնասիրությունը,

2) Հաստատության 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված առարկաների ուսումնասիրությունն ավարտվում է 12-րդ դասարանի 1-ին կիսամյակի վերջում՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) ամփոփիչ ատեստավորմամբ (պետական ավարտական քննությամբ), բացառությամբ «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) և սովորողի կողմից 2-րդ կիսամյակում ուսումնասիրության համար ընտրված առարկաների,

3) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողի շաբաթական ուսումնական բեռնվածությունը ձևավորվում է պարտադիր ուսումնասիրության «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) (1 ժամ) առարկայի և սովորողի ընտրությամբ առնվազն երեք առարկայի ուսումնառության համար հատկացված ժամաքանակից՝ ապահովելով առնվազն 31 դասաժամ,

4) Նորմատիվային 34 դասաժամի և սովորողի ուսումնական պարտադիր բեռնվածության 31 դասաժամի տարբերությունից մնացած 3 դասաժամը տնօրինում է սովորողը,

5) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաներին Հաստատության ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը տրվում է այդ առարկաների ուսումնական նյութի կրկնությանը,

6) «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) և սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնասիրությունն (կրկնությունը) ավարտվում է 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի վերջում՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) պետական ավարտական քննությամբ,

7) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում ուսումնասիրության համար իրենց կողմից ընտրված ուսումնական առարկաների ցանկը Հաստատության սովորողներն ընթացիկ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում մինչև դեկտեմբերի 1-ը գրավոր հայտնում են Հաստատության տնօրենին: Միասնական քննություններ հանձնող սովորողները ցանկում ներառում են նաև միասնական քննական առարկաները,

8) Եթե Հաստատության ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկա(ներ) դասարանի սովորողներից ոչ մեկը չի ընտրել, ապա այդ առարկային(ներին) ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը վերաբաշխվում է տվյալ դասարանի սովորողների կողմից ընտրված ուսումնական առարկաներին, և կազմվում է տվյալ դասարանի 2-րդ կիսամյակի ուսումնական պլանը,

9) Դասարանի ուսումնական պլանին համապատասխան՝ կազմվում է տվյալ դասարանի դասացուցակը,

10) Մեկից ավելի դասարանների առկայության դեպքում կարող են ձևավորվել միևնույն առարկան ուսումնասիրող զուգահեռ դասարանների սովորողներից կազմված ուսումնական խմբեր: Այդ դեպքում տվյալ ուսումնական առարկայից անհրաժեշտ գրանցումները կատարվում են առարկայական դասամատյանում: Կիսամյակային և տարեկան գնահատականներն այնուհետև փոխանցվում են դասարանի հիմնական դասամատյան,

11) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնական նյութի կրկնությունը կազմակերպվում է դասարանային (դասացուցակին համապատասխան) և արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներով,

12) Սովորողը մասնակցում է միայն իր ընտրած առարկաների դասարանային ուսումնական պարապմունքներին,

13) Սովորողը մասնակցում է արտադասարանային ուսումնական պարապմունքներին այն դեպքում, երբ դասացուցակով նրա շաբաթական բեռնվածությունը պակաս է 31 դասաժամից,

14) Սովորողի արտադասարանային պարապմունքներին մասնակցության տևողությունը որոշվում է 31 ժամի և սովորողի դասացուցակային բեռնվածության տարբերությամբ,

15) Արտադասարանային պարապմունքներին սովորողի(ների) մասնակցությունը հաշվառվում է և գրանցվում է համապատասխան մատյանում դասղեկի կողմից,

16) Արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներ են՝ ուսուցիչների կողմից տրված հանձնարարությունների կատարումը, լրացուցիչ ուսումնական գրականության և այլ աղբյուրների ուսումնասիրումը, գործնական և փորձնական աշխատանքների կատարումը, ուսումնական նախագծերի իրականացումը, հիմնահարցերի հետազոտումը, ստեղծագործական աշխատանքը, տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարումը, գրավոր աշխատանքները, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի կիրառումը, անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարումը, ուսումնական էքսկուրսիաների անցկացումը և այլն,

17) Սովորողն իր տնօրինմանը հատկացված 3 ժամը կարող է օգտագործել կրթական այլ ծառայություններ ստանալու նպատակով՝ տվյալ Հաստատությունում կամ այլ հաստատություններում:

27. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից 1-ինը ռուսերենն է, 2-րդը՝ անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն կամ Նախարարության կողմից երաշխավորված ծրագիր ունեցող այլ լեզու,

2) Հաստատության ընտրությամբ 3-րդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-9-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ) և 11-12-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ)՝ Նախարարության կողմից հաստատված չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում: 5-րդ դասարանում՝ 3-րդ, 4-րդ և 6-րդ դասարաններում՝ 5-րդ, 6-րդ դասարանների ծրագրերը լրիվությամբ ուսուցանելու համար լրացուցիչ հատկացվում է մեկական ժամ՝ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից. 10-րդ դասարանում հատկացվում է շաբաթական 2 ժամ՝ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից,

3) Նախարարության կողմից՝ Հաստատության մանկավարժական խորհրդի և ըստ Հաստատության ենթակայության Լիազոր մարմնի առաջարկությունների հիման վրա, կարող է փոխարինվել Հաստատությունում դասավանդվող 2-րդ օտար լեզուն (անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն և այլն) այլ օտար լեզվով, ինչպես նաև որոշվել նոր հիմնադրված Հաստատությունում դասավանդվող 2-րդ օտար լեզուն:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

28. Հանրակրթական դպրոցի դասարանը կազմավորվում է տվյալ դասարան փոխադրված և ընդունված սովորողների ընդհանուր թվի միջին թվաբանականի հաշվարկով: Տարրական և միջին դպրոցների դասարաններում սովորողների թիվը սահմանվում է 25-35, իսկ ավագ դպրոցում՝ 20-30 սովորող: Դասարանում սովորողների առավելագույն թիվը տարրական և միջին դպրոցում չի կարող գերազանցել 35-ը, ավագ դպրոցում՝ 30-ը: Հիմնադրի կողմից սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել Հաստատության ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ Հաստատության խորհրդի որոշմամբ:

29. Տարրական դպրոցում «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Շախմատ», միջին դպրոցում և ավագ դասարաններում «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 26 և ավելի է:

30. Դասարանը նույն կարգով կարող է կիսվել երկու խմբի նաև Նախարարության երաշխավորած «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ, 11-րդ դասարաններ) առարկայի պարապմունքների ժամանակ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակը այդ առարկային տրամադրելու դեպքում:

31. «Տեխնոլոգիա» առարկայի (5-7-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը կիսվում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների, եթե տվյալ դասարանի ընդհանուր աշակերտների թիվը 12 և ավելի է (ուսուցումը կազմակերպվում է յուրաքանչյուր խմբի համար հաստատված համապատասխան առարկայական ծրագրով):

32. Անհրաժեշտության դեպքում Հաստատությունն իրավասու է վերաբաշխելու առարկաների ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

33. 8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ.

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին,

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը,

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին,

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

34. 6-րդ դասարանում «Կերպարվեստ» ուսումնական առարկան դասավանդվում է 1-ին, իսկ «Երաժշտություն»-ը՝ 2-րդ կիսամյակում, 7-րդ դասարանում «Երաժշտություն» ուսումնական առարկան դասավանդվում է 1-ին կիսամյակում, իսկ «Կերպարվեստ»-ը 2-րդ՝ ապահովելով Հաստատության ուսումնական պլանով սահմանված տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակի պահպանման պահանջը:

35. 6-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն» և այլ առարկաների ծրագրերով ամսական առնվազն 1 (մեկ) ժամ ուսուցումը կազմակերպվում է համակարգչային կաբինետում (դրա առկայության դեպքում)՝ ելնելով յուրաքանչյուր առարկայից մատուցվող ուսումնական նյութի բովանդակային և դասավանդման մեթոդական պահանջներից: Այն առավել արդյունավետ իրականացնելու համար նպատակահարմար է օգտագործել էլեկտրոնային ուսումնական նյութեր:

36. «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների համաժամանակյա թեմաների ուսուցումն ապա-

2021-2022 ՈՒՍՏԱՐԻ

հովելու նպատակով ուսուցիչներին իրավունք է տրվում մասնակի փոփոխություններ կատարելու նշված առարկաների դասացանկում՝ պահպանելով յուրաքանչյուր առարկային հատկացված տարեկան ընդհանուր ժամաքանակը:

37. Հաստատությունում, ըստ կրթական ծրագրերի աստիճանների, տարրական, միջին և ավագ դպրոցներում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների համար «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցումը կարող է իրականացվել Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի «Ֆիզկուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով, Հաստատության խմբակների համար նախատեսված ժամաքանակի շրջանակում կամ տվյալ դասարանի «Ֆիզկուլտուրա» առարկայի դասաժամերին՝ անհատական ծրագրով: Հաստատությունում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների գնահատում «Ֆիզկուլտուրա» առարկայից չի կատարվում:

4. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀՈՍՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՎԱԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

38. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի (այսուհետ՝ Ավագ դպրոց) Ուսումնական պլանը սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող Ավագ դպրոցում միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների:

39. Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝

1) հիմնական-հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական,

2) ընդհանուր:

40. Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների Ուսումնական պլաններն ըստ հոսքերի տրված են՝

1) ընդհանուր հոսքը՝ «Հաստատության ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 1-ի),

2) հումանիտար հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 2-ի),

3) բնագիտամաթեմատիկական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 3-ի),

4) արհեստագործական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի):

41. Ուսումնական պարապմունքները Ավագ դպրոցում սկսվում են 2021 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2022 թվականի մայիսի 27-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա և մայիսի 30-ին 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 34 ուսումնական շաբաթ ավագ դպրոցի յուրաքանչյուր դասարանի համար: Բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական շաբաթվա տևողությունը սահմանում է ուսումնական հաստատությունը՝ 15-օրյա ժամկետում համաձայնեցնելով Նախարարության հետ:

42. Ավագ դպրոցում գործում է գնահատման տասը միավորային սանդղակ: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող է կիրառվել նաև գնահատման այլ սանդղակ, որը բերվում է տասը միավորային գրանցման:

43. Ավագ դպրոցում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է:

44. Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականներ՝ բացառությամբ այն առարկաների, որոնց ուսումնասիրությունն ավարտվում է 12-րդ դասարանի 1-ին կիսամյակի վերջում:

45. Ուսումնական պարապմունքների ընթացքում 10-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ. աշնանային՝ 2021 թվականի հոկտեմբերի 25-31-ը ներառյալ, ձմեռային՝ 2021 թվականի դեկտեմբերի 27-ից 2022 թվականի հունվարի 9-ը ներառյալ, գարնանային՝ 2022 թվականի մարտի 21-27-ը ներառյալ:

46. Հոսքային ուսուցման առարկաների դասերին դասարանի միջին խտությունը կարող է սահմանվել 12-15 սովորող՝ ոլորտը կարգավորող նորմերի պահպանմամբ:

47. Ավագ դպրոցի Ուսումնական պլանների ընդհանուր հանրակրթական բաղադրիչի «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների և արհեստագործական մասնագիտական դասընթացների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել երկու խմբի, եթե տվյալ դասարանի սովորողների թիվը 20 և ավելի է:

48. Ավագ դպրոցի միևնույն դասարանի(ների) սովորողներն ընդհանուր հանրակրթական բաղադրիչի շրջանակում ուսումնասիրվող 2-րդ օտար լեզվի (անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն կամ որևէ այլ լեզու) դասաժամին խմբավորվում են ըստ իրենց կողմից հիմնական դպրոցում ուսումնասիրված օտար լեզվի՝ անկախ սովորողների թվից, բայց ոչ ավելի, քան երեք օտար լեզվի (բացի ռուսերենից) համար:

49. 12-րդ դասարանում ուսումնական գործընթացն իրականացվում է սույն հավելվածի 26-րդ կետի պահանջներին համապատասխան:

50. Օրինակելի ուսումնական պլանների կառուցվածքը.

1) Հոսքային (խորացված) ուսուցման Ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական) և դպրոցական բաղադրիչներից.

ա. Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) և յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակները՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար,

բ. Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում՝ մասնագիտական դասընթացներին: Հոսքային բաղադրիչում ընդգրկված առարկաները (դասընթացները) ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման շարունակականության ապահովմանը, իսկ արհեստագործական հոսքի պարագայում՝ նախնական մասնագիտական կրթության որոշակի որակավորումների շրջանակում համապատասխան հմտությունների ձեռքբերմանը,

գ. Նախարարությունը, հաշվի առնելով տվյալ Ավագ դպրոցի առանձնահատկությունները, խորացված ուսուցմամբ առարկաների ցանկում կատարում է փոփոխություններ՝ տվյալ հոսքի խորացված ուսուցման առարկաներին ավելացնելով նոր առարկա(ներ)՝ Ավագ դպրոցի առաջարկության և սահմանված կարգով հաստատված առարկայական ծրագրի(երի) առկայության դեպքում,

դ. Դպրոցական բաղադրիչն ընդգրկում է հոսքային ուսուցման բովանդակությունը լրացնող ընտրովի (լրացուցիչ) առարկաները, դասընթացները և դրանց ուսուցման համար ըստ դասարանների նախատեսված ժամաքանակները: Այս բաղադրիչը տնօրինում է դպրոցը՝ ղեկավարվելով Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով,

ե. Ավագ դպրոցը Ուսումնական պլանների հիման վրա ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ մշակում է յուրաքանչյուր հոսքի՝ տվյալ ուսումնական տարվա ենթահոսքերի իր ուսումնական պլանները: Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս դպրոցն ընդհանուր հանրակրթական և հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է դպրոցական բաղադրիչին,

զ. Ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչները ֆինանսավորվում են պետական բյուջեից,

է. 10, 11-րդ և 12-րդ դասարաններում շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:

51. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգը հոսքային ուսուցմամբ դասարաններում.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաև տվյալ հոսքային ուսուցմամբ դասարանի ընդհանուր հանրակրթական և հոսքային ուսուցման բաղադրիչների առարկաներին,

2) Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետևյալ՝ «Գրաբար» (11-րդ դասարան), «Արտասահմանյան գրականություն» (11-րդ դասարան), «Բանահյուսություն» (հին և միջնադարյան շրջան, 11-րդ դասարան), «Ճարտասանություն» (11-րդ դասարան), «Արևմտահայերեն» (10-րդ կամ 11-րդ դասարան), «Պետության և իրավունքի հիմունքներ» (11-րդ դասարան), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հնագիտություն» (10-րդ դասարան), «Ազգագրություն» (10-րդ դասարան), «Հայաստանի հարակից երկրների պատմություն» (11-րդ դասարան), «Կրոնի պատմություն» (11-րդ դասարան), «Արվեստի պատմություն» (10-11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (բնագիտամաթեմատիկական հոսք, 10-11-րդ դասարաններ), «Քրիստոնեական բարոյագիտություն» (12-րդ դասարան), «Բարոյագիտություն» (10-րդ դասարան), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Թվային համակարգեր» (10-րդ դասարան), «Երկրաչափության հիմունքներ» (12-րդ դասարան), «Դիսկրետ մաթեմատիկայի տարրեր» (11-րդ դասարան), «Աստղագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ռադիոէլեկտրոնիկա» (11-րդ դասարան), «Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Կիրառական քիմիա» (11-րդ դասարան), «Գիտական ճանաչողության հիմունքներ» (11-րդ դասարան), «Բնական գիտությունները և մաթեմատիկան» (10-րդ դասարան), «Բնագիտական մտքի պատմություն» (11-րդ դասարան), «Երկրագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Քերականություն և բառագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Գրականություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Մասնագիտական կողմնորոշում» (10-րդ կամ 11-րդ դասարան), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ձեռնարկատիրական կրթություն» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը՝ դրանց առարկայական ծրագրերը Նախարարության կողմից հաստատվելուց հետո,

3) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

52. 10-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին,

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը,

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին,

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

53. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Ավագ դպրոցում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն կամ որևէ այլ լեզու,

2) Հաստատության ընտրությամբ 3-րդ (հիմնական և մյուս օտար լեզվից բացի) օտար լեզու (անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն և այլն) կարելի է դասավանդել Նախարարության կողմից հաստատված համապատասխան առարկայական չափորոշիչներով և ծրագրերով (շաբաթական երկու ժամ), ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում,

3) Ավագ դպրոցը դասավանդվող օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի առաջարկությունը օտար լեզվի փոխարինման վերաբերյալ և կայացնում համապատասխան որոշում,

4) Նոր հիմնադրված Ավագ դպրոցում դասավանդվող 2-րդ օտար լեզուն Հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ որոշում է Նախարարությունը:

54. Սույն հավելվածի աղյուսակների պարզաբանումներ.

1) Սույն հավելվածի Աղյուսակ 2-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև չորս առարկա,

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական են համարվում «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաները,

գ. «Օտար լեզու-1» և «Ռուսաց լեզու-1» առարկաներն ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու-2» առարկաները,

2) Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է որոշակի թվով առարկաներ՝ համաձայն սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պարզաբանման: Այդ դեպքում սովորողը չի ուսումնասիրում Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկաները,

3) Հումանիտար հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին: Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հավելվածի 25-րդ կետի համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված հոսքային և (կամ) ընդհանուր հանրակրթական առարկաների ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ,

☞6

ՈՒՍՊԼԱՆ

5☜ 4) Ավագ դպրոցի հումանիտար հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 2-ի)՝ 11-րդ դասարանում դպրոցական բաղադրիչում ձևավորված ժամաքանակից 0,5 ժամ կարող է հատկացվել «Հասարակագիտություն» առարկային՝ հանրակրթական դպրոցի ընդհանուր հոսքի համար նախատեսված ծրագրով ուսուցում կազմակերպելու նպատակով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 1-ի),

5) Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 3-ի)՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև երեք առարկա,

բ. «2 » նշագրումը նշանակում է, որ բնագիտական են համարվում «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաները,

գ. «Օտար լեզու-1» առարկան ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» առարկան,

6) Սույն հավելվածի Աղյուսակ 3-ում՝

ա. Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) առարկա(ներ) ընտրելու դեպքում չի ուսումնասիրում Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկան(երը),

բ. Բնագիտամաթեմատիկական հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին,

գ. Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հավելվածի 25-րդ կետի «Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ»-ի համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է հոսքային և ընդհանուր հանրակրթական առարկաների՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված առարկայական ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ,

դ. 11-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկան ուսումնասիրվում է հանրակրթական դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար նախատեսված ծրագրով,

ե. Եթե սովորողը 12-րդ դասարանում չի ուսումնասիրում «Օտար լեզու-1» առարկան, ապա շարունակում է ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու» առարկաների համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունը,

զ. «Համաշխարհային պատմություն» առարկան ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել սույն հավելվածի Աղյուսակ 3-ի ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով,

7) Սույն հավելվածի Աղյուսակ 4-ում,

ա. «1» նշագրումը նշանակում է, որ մասնագիտական դասընթացներ (առարկաներ) են համարվում դպրոցի կողմից իրականացվող նախամասնագիտական ուսումնական ծրագրերը.

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական են համարվում «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաները.

8) Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի)՝

ա. մասնագիտական դասընթացների (առարկաների) ժամաքանակը ներառում է նաև պրակտիկ ուսուցման ժամերը,

բ. ուսումնական պլանով 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի ժամաքանակը տնօրինվում է սույն հավելվածի 25-րդ կետի համաձայն՝ ներառյալ ուսումնական պրակտիկայի կազմակերպումը: Ուսուցումը կազմակերպվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված հոսքային և (կամ) ընդհանուր հանրակրթական առարկաների ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ,

գ. «Համաշխարհային պատմություն» առարկան դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի),

9) Ռուսերենով ուսուցմամբ հիմնական և միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) Ուսումնական պլանի (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 5-ի և Աղյուսակ 6-ի)՝ «Մայրենի» (հայերեն) առարկայի դասաժամերը 1-ին դասարանում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, տառուսուցմանը,

10) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 6-ի)՝ 6-9-րդ դասարաններում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային լրացուցիչ դասաժամեր չեն հատկացվում,

11) Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև (ոչ պակաս քան 21 օր) բուժվող երեխաների անհատական ուսուցման Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 7-ի) և տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 8-ի)՝

ա. ռուսերենով ուսուցման դեպքում ռուսաց լեզվին տրվում են հայերենի (տարրական դպրոցում՝ «Մայրենի», միջին և ավագ դպրոցում՝ «Հայոց լեզու և գրականություն» առարկաների) համար հատկացված դասաժամերը՝ ապահովելով նույն ժամաքանակի սահմաններում նաև ռուս գրականության ուսուցումը, իսկ ռուսերենի համար նախատեսված ժամաքանակը տրվում է հայոց լեզվի ուսուցմանը: 1-ին դասարանում ռուսաց լեզվին հատկացված ժամաքանակից 2 ժամը տրվում է հայերենի («Մայրենի») ուսուցմանը,

բ. տնային պայմաններում ուսուցում կազմակերպվում է բնակավայրն սպասարկող բուժհիմնարկի փաստաթղթերի հիման վրա (եթե բուժման ընթացքը տնային պայմաններում շարունակվելու է մեկ ամսից ավելի)՝ ըստ Հաստատության ենթակայության՝ համապատասխան Լիազորված մարմնի գիտությամբ: Տնային ուսուցում կազմակերպվում է վնասվածքների և հիվանդությունների դեպքում, որոնք հանգեցնում են տեղաշարժման սահմանափակման կամ տնային պայմաններում խնամքի կամ մեկուսացման կազմակերպված անհրաժեշտության՝ հիվանդության սկզբից 22 և ավելի օր տևողությամբ,

գ. տնային պայմաններում ուսուցման կազմակերպումն իրականացնում է այն Հաստատությունը, որտեղ հաշվառված է սովորողը: Տնային ուսուցում կարող է կազմակերպվել հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ,

դ. տնային պայմաններում ուսուցում կազմակերպող ուսուցիչները վճարվում են դրույքաչափով, եթե ուսուցումը նախատեսվում է ամբողջ ուսումնական տարվա համար, մնացած դեպքերում՝ ժամավճարով,

ե. հիվանդանոցներում երկարատև բուժվող երեխաների ուսուցումը կազմակերպվում է ըստ դասարանների՝ վերոնշյալ կարգի պահպանմամբ, տվյալ բուժհաստատությունն սպասարկող ուսումնական Հաստատության կողմից (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 7-ի):

Աղյուսակ 1

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2,5	2,5	2	2	2,5
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	3	3	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	2	1	1
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	1	1	1	1	1	1	1	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	2	2	2
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1.5	2	2	2	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-	-	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	2	2	2	2.5	2	2	2	2	2	3
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 2

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Խորացված ուսուցմամբ առարկաներ [1]	Հայոց լեզու-1	2	2	3
	Հայ գրականություն-1	3	4	5
	Հայոց պատմություն-1	3	5	8
	Համաշխարհային պատմություն-1	3	5	8
	Օտար լեզու-1	3	5	8
	Ռուսաց լեզու-1 (Ռուսաց լեզու, Ռուս գրականություն)	3	5	8
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	3	3
	Հայոց պատմություն	2	2	2
	Համաշխ. պատմություն	2	1	1
	Հասարակագիտություն	2	1.5	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու-2	2	2	2
	Հայոց եկեղեցու պատմություն	1	1	-
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա [2]	1	1	-
	Բնագիտական առարկա [2]	1	-	-
	Բնագիտական առարկա [2]	1	-	-
	Ինֆորմատիկա	1	1	-
	Ֆիզկուլտուրա	3	3	1
	ՆԶՊ	1	1	1
	Դպրոցական բաղադրիչ			
Ընդամենը		34	34	34

2021-2022 ՈՒՍՏԱՐԻ

Աղյուսակ 3

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԻ X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Խորացված ուսուցմամբ առարկաներ [1]	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երկրաչափություն) -1	7	8	8
	Ֆիզիկա - 1	4	5	8
	Քիմիա - 1	4	5	8
	Կենսաբանություն -1	4	5	8
	Աշխարհագրություն -1	3	5	8
	Ռուսաց լեզու-1 (Ռուսաց լեզու, Ռուս գրականություն)	3	5	8
	Օտար լեզու -1[3]	3	5	8
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Հասարակագիտություն	2	1,5	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երկրաչափություն)	5	5	5
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա [2]	1	1	-
	Բնագիտական առարկա [2]	1	1	-
	Բնագիտական առարկա [2]	1	-	-
	Ինֆորմատիկա	1	2	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1
	ՆԶՊ	1	1	1
	Դպրոցական բաղադրիչ			
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 4

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՍՔԻ X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Առարկայախումբ	Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Մասնագիտական դասընթացներ (առարկաներ)[1]		9	13	15.5
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հան-րակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Օտար լեզու	2	2	2
	Ռուսաց լեզու	2	2	2
	Հասարակագիտություն	2	1	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	1	-
	Բնագիտական առարկա[2]	1	-	-
	Բնագիտական առարկա[2]	1	-	-
	Ինֆորմատիկա և ՏՀՏ	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆԶՊ	1	1	1
	Դպրոցական բաղադրիչ			
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 5

ՌՈՒՍԵՐԵՆԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ I - IX ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	3	4	4	4	4	4	4	4
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	-	-	-	1.5
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	-	1.5
Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	1	1	1	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	-	-	1	1	1.5	1.5	1.5	1.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35

Աղյուսակ 6

ՌՈՒՍԵՐԵՆՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (ԴԱՍԱՐԱՆԻ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ռուսաց լեզու	4	8	6	8	6	3	3	3	2.5	3	3	3
Ռուս գրականություն	-	-	-	-	-	2	2	2	2	3	3	3
Մայրենի	3	3	5	4	6	5	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	5	4	5	5	-	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Տեխնոլոգիա	2	1	1	1	1	1	2	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	1.5	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	1.5	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1	1	1	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	1	1.5	2
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	-	1	-	1.5	0.5	0.5	1	-	0.5	2.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 7

ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	Տարրական դպրոց				Միջին դպրոց				Ավագ դպրոց			
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	5	4.5	4.5	4.5	4.5	4	-	-	-	-	-	-
Հայոց լեզու և գրակ.	-	-	-	-	-	-	3.5	2.5	3	2.5	2	2
Ռուսաց լեզու	-	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Օտար լեզու	-	-	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ես և շրջակա աշխարհը	-	0.5	0.5	0.5	-	-	-	-	-	-	-	-
Մաթեմատիկա	2	3	2	2	2	2	2	3	2.5	2.5	2	2
Հայոց պատմություն	-	-	-	-	-	0.5	1	0.5	0.5	0.5	0.5	0.5
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	0,5	0,5	0.5	0.5	0.5
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	1	1	1
Քիմիա	-	-	-	-	-	-	0.5	0,5	0.5	0.5	0.5	0.5
Բնագիտություն	-	-	-	-	0.5	0.5	-	-	-	-	-	-
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	0.5	0,5	0.5	0.5	0.5	0.5
Աշխարհագրություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11	11	10	10

Աղյուսակ 8

ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ՉԱՓԱՎՈՐ ԵՎ ԾԱՆՐ ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Լեզու և ընթերցանություն	3	3	3	3	3	3	3	3	3
Մաթեմատիկա	2	2	2	2	2	2	2	2	2
Ես և շրջակա աշխարհը	1	2	2	2	1	1	1	1	1
Տեխնոլոգիա (Ձեռքի աշխատանք)	1	2	2	2	1	2	2	2	2
Բնագիտություն	-	-	-	-	1	1	1	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	1	2	2	2
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ ՄԱՔՍԻՄՈՒՄԻ ԵՎ ՄԻՆԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խնդիր 1. ABC անկյան ներսի M կետով տանել ուղիղ այնպես, որ այն կտրի փոքրագույն մակերեսով եռանկյուն:

Լուծում. M կետով տանենք ուղիղ այնպես, որ $AM = MC$ (որը ևս կառուցման խնդիր է), և կամայական DME ուղիղ: Ցույց տանք, որ առաջին ուղիղը կտրում է փոքրագույն մակերեսով եռանկյուն: Դրա համար տանենք CK-ն զուգահեռ AB-ին, նկ. 1:



Նկ. 1

Եռանկյուն DAM հավասար է եռանկյուն KCM: Այսպիսով BAC եռանկյան մակերեսը հավասար է $BDKC$ քառանկյան մակերեսին, որը կազմում է եռանկյան BDE-ի մակերեսի մաս:

Հաշվենք մակերեսի այդ մեծությունը: BAC եռանկյան մակերեսը հավասար է

$$\frac{AB \cdot BC \sin\alpha}{2} = \frac{2MN \cdot 2PN}{2}\sin\alpha = 2MN \cdot PN \sin\alpha:$$

Այսպիսով, որոնելի եռանկյան մակերեսը հավասար է $BPMN$ զուգահեռագծի մակերեսի կրկնապատիկին:

Խնդիր 2. MN ուղղի միևնույն կողմում տրված են A և B կետերը: Ուղղի վրա գտնել C կետն այնպես, որ $AC + CB$ գումարը լինի փոքրագույնը:



Նկ. 2

Լուծում. Կառուցենք A' կետը, որը համաչափ է A-ին MN նկատմամբ: Կառուցենք $A'B$ ուղիղը: $A'B$ ուղղի և MN-ի հատման C կետը որոնելի կետն է: Եվ իրոք, $AC + CB = A_1C + CB = A_1B$, նկ. 2: Այլ կետի, օրինակ, D կետի համար, կստանանք՝ $AD + DB = A_1D + DB > A_1B$:



Նկ. 3

Խնդիր 3. Տրված են երկու զուգահեռ ուղիղներ և երկու կետեր՝ A և B, որոնք գտնվում են զուգահեռների արտաքին տիրույթում: Գտնել ամենափոքր երկարությամբ բեկյալը, որը միացնում է A և B կետերը և ունի FE-ի ուղղությունը, նկ. 3:

Լուծում. Թող $AMNB$-ն որոնելի բեկյալն է: AM հատվածը զուգահեռ տեղափոխենք այպես, որ նա գրավի CN դիրքը: AC հատվածը հավասար և զուգահեռ է MN և FE հատվածներին: $AMNB$ բեկյալն ունի փոքրագույն երկարություն:

Այսպիսով, խնդրի լուծման համար A կետից տանում ենք ուղիղ զուգահեռ FE, և անջատում հատված $AC = FE$: CB ուղիղը կհատի PQ որոնելի N կետում:

Մասնավոր դեպքում երբ MN-ը ուղղահայաց է a և b ուղիղներին, ստանում ենք գետի վրայով A և B գյուղերը միացնող կամուրջի կառուցման խնդիրը:

Խնդիր 4. Տրված են երկու զուգահեռ ուղիղներ և երկու կետեր՝ A և B, որոնք պատկանում են զուգահեռների արտաքին տիրույթին: Գտնել ամենափոքր երկարության այն բեկյալը, որը միացնում է A և B կետերը, երկու կետեր պատկանում են զուգահեռներին և զուգահեռների միջև գտվող հատվածը ունի տրված d երկարությունը, նկ. 4:



Նկ. 4

Լուծում. Զուգահեռ ուղիղներից մեկի վրա ընտրում ենք կամայական D կետ և այդ կետից d շառավղով կառուցում շրջանագիծ: Թող այն հատվում է մյուս ուղղի հետ F և E կետերում: Որոնելի բեկյալի օղակը զուգահեռների միջև պետք է ունենա DE կամ DF ուղղությունը: Նկ. 4-ում ամենափոքր երկարության բեկյալը AN_1N_2B է: Խնդիրը միշտ ունի լուծում եթե d հատվածը փոքր չէ զուգահեռների հեռավորությունից:

Խնդիր 5. m ուղղի միևնույն կողմում տրված են երկու կետեր A և B: Ուղղի վրա տեղադրել d երկարության հատված այնպես, որ $AMNB$ բեկյալը ունենա ամենափոքր երկարություն, նկ. 5:



Նկ. 5



Նկ. 6

Լուծում. A կետից տանենք AF ուղիղը զուգահեռ m ուղղին և նրա վրա անջատենք $AC = d$ երկարության հատված: Կառուցենք B' կետը, որը համաչափ է B-ին m ուղղի նկատմամբ: CB' կհատի m ուղիղը որոնելի N կետում, իսկ AM ուղիղը, որը զուգահեռ է CB' կորոշի որոնելի M կետը:

Խնդիր 6. MN ուղղի միևնույն կողմում ընկած են A և B կետերը: MN ուղղի վրա կառուցել C կետը այնպես, որ $CA - CB$ տարբերությունը լինի ամենամեծը:

Լուծում. Կառուցենք AB և MN ուղիղների հատման կետը՝ C: Այդ կետը որոնելի կետն է: Այդ կետի համար $CA - CB = BA$, մինչդեռ ուրիշ, օրինակ D կետի համար $DA - DB < AB$:

Խնդիր 7. xOy ուղիղ անկյան ներսում տրված են A և B կետերը: Oy և Ox կողմերի վրա գտնել համապատասխանորեն C և D կետերը այնպես, որ $ACDB$ բեկյալը ունենա փոքրագույն երկարություն:



Նկ. 7

Լուծում. Կառուցենք A_1 և B_1 կետերը համաչափ Ox և Oy ուղիղներին, նկ. 7: A_1B_1 ուղիղը կհատի անկյան կողմերը որոնելի կետերում: $AC + CD + DB$ բեկյալի երկարությունը հավասար է A_1B_1 հատվածին: Իսկ այլ բեկյալի դեպքում կստանանք, օրինակ $AC_1 + C_1D_1 + D_1B > A_1B_1$:

Խնդիր 8. Տրված են MN և KL զուգահեռ ուղիղները: KL-ի վրա տրված է $AB = b$: MN-ի վրա գտնել C կետը այնպես, որ անկյուն ACB լինի փոքրագույնը:

Լուծում. Կառուցենք շրջանագիծ, որը անցնում է A և B կետերով և շոշափում է MN փնտրվող C կետում: Անկյուն ACB մեծ է այլ ամեն մի ADB-ից, որտեղ D կամայական կետ է MN ուղղի վրա, նկ. 8: Դա դժվար չէ ապացուցել:



Նկ. 8

Անկյուն ACB չափվում է այն աղեղի կեսով, վորին այն հենվում է՝ $\angle ACB = \frac{1}{2}AB$; իսկ անկյուն $\angle ADB = \frac{1}{2}(AB - A_1B_1)$:

Գրված հավասարություններից երևում է այն ինչ պահաջվում է ապացուցել:

Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոն, մ.գ.թ., դոց.

ԿՈՐԵԼ Է

Հասմիկ Սերգեյի Գարաքյանի միջնակարգ կրթության Ա042424 համարի ատեստատը՝ տրված Ասկերանի շրջանի Շոշ գյուղի միջնակարգ դպրոցից՝ 1995 թվականին:

Համարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 19.08.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: